Երվանդ Նազարեթյան

Ծննդյան գիշեր

Եվս մեկ շրջան անխախտ հեռացավ

Քարոտ ու փշոտ ճամփաների հետ,

Ահա մի էջ էլ պատմություն դարձավ,

Որը սերտվում է, բայց չի թերթվում ետ:

Դարձյալ իմաստուն ու ծանր գիշեր

Դոփում է սրտիս թրթիռներին բաց,

Ինձ դավաճանած ես-ս անձնվեր

Խոսում է իմ որբ անցյալի հետ թաց:

Որտեղ արեւով օծված մի խաչյալ

Պրկված ճչալով երկար եմ լռել,

Ուր հրեական բարքերը մռայլ

Իմ մեջ մկրտվող փյունիկ են կռել:

Եվ ինքս իմ դեմ այս ընդվզումից

Ինքնահալածված տալիս եմ փախուստ,

Բայց Եռախորհուրդ Կյանքն ասում է ինձ՝

Դու քո տվածով ես միայն հարուստ:

Հենվում եմ, ահա, այս սուրբ խոկումին՝

Ներշնչվելով իմ հոգացքով անբիծ,

Եվ տեղի տալով հոգուս ջրվեժին,

Փորձում եմ հառնել անդուլ աղոթքից:

Ու կարոտում եմ այսպես ամեն օր

Իմ մանկությանը լուրթ ու իմաստուն,

Այնքան խելացի տարիներ էին, որ

Դեռ այս աշխարհից բան չէի հասկանում: